ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՐԱԲԿԻՐ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ, ՀՐ. ՆԵՐՍԻՍՅԱՆ Փ., մասնաշենք 10)

ՈՐՈՇՈՒՄ
Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

ԵԴ2/2864/02/24 ք. Երևան
19 Ապրիլի 2024թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (այսուհետ՝ դատարան), նախագահությամբ դատավոր Աննա Շիլաջյանի, ծանոթանալով «Դա Մէն» ՍՊ ընկերության ընդդեմ «ՀՀ Ներքին գործերի նախարարություն» ՝ IV. Պահանջը Այսպիսով, ղեկավարվելով վերը շարադրվածով և հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ, 121-րդ, 122-րդ, 202-րդ, 234.5-234.12 հոդվածները, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածը՝ խնդրում ենք անվավեր ճանաչել 2024 թվականի մարտի 26-ով թվագրված Հայցվորին գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու մասին Պատվիրատուի ղեկավար ՀՀ ներքին գործերի նախարարության գլխավոր քարտուղար Ա. Ֆիդանյանի ոչ իրավաչափ որոշումը և որպես հետևանք պարտավորեցնել Պատասխանողին Հայցվորին վերադարձնել հայտի ապահովումը: Կից ներկայացվում է.1. ՀՀ ՆԳՆ ԳՀԾՁԲ-ԾԱՍ/2024/Ա-35 ծածկագրով ընթացակարգի հրավերի պատճենը,2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2024 թվականի մարտի 13-ի ժամը 17:45-ի նիստի թիվ 2 արձանագրության պատճենը,3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2024 թվականի մարտի 20-ի ժամը 15:00-ի նիստի թիվ 3 արձանագրության պատճենը,4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2024 թվականի մարտի 25-ի ժամը 15:00-ի նիստի թիվ 4 արձանագրության պատճենը,5. 2024 թվականի մարտի 27-ին Հայցվորին էլ. փոստով ուղարկվել է 2024 թվականի մարտի 26-ով թվագրված Հայցվորին գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու մասին Պատվիրատուի ղեկավար ՀՀ ներքին գործերի նախարարության գլխավոր քարտուղար Ա. Ֆիդանյանի որոշման և ուղեկցող գրության պատճենը,6. Հայցվորի կողմից ներկայացված հայտի ապահովման պատճենը,7. Արտատպում gnumner.minfin.am կայքից գնման ընթացակարգի շրջանակներում կատարված հրապարակումների վերաբերյալ,8. Հայցվորի ներկայացուցչի լիազորագիրը, փաստաբանական գործունեության արտոնագրի և նույնականացման քարտի պատճենները,9. «Դա Մէն» ՍՊԸ-ի՝ ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանից քաղվածքը,10. Պետական տուրքի վճարման անդորրագիրը, սույն հայցադիմումը և կից ներկայացվող փաստաթղթերը Պատասխանողին և երրորդ անձին ուղարկելը հավաստող փոստային առաքման անդորրագրերը,11. Պատշաճ ձևով (ընթեռնելի) կազմված հայցադիմումի օրինակը։16 ապրիլի 2024թ.Հայցվորի ներկայացուցիչ,փաստաբան Դավիթ Ամիրյան պահանջի մասին հայցադիմումին.

ՊԱՐԶԵՑ

Դա Մէն ՍՊ ընկերության ներկայացուցիչ Դավիթ Ամիրյանի կողմից հայցադիմում է ներկայացվել դատարան ընդդեմ ՀՀ Ներքին գործերի նախարարության՝ անվավեր ճանաչել 2024 թվականի մարտի 26-ով թվագրված Հայցվորին գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու մասին Պատվիրատուի ղեկավար ՀՀ ներքին գործերի նախարարության գլխավոր քարտուղար Ա. Ֆիդանյանի ոչ իրավաչափ որոշումը և որպես հետևանք պարտավորեցնել պատասխանողին Հայցվորին վերադարձնել հայտի ապահովումը։

Հայցադիմումը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա. Ճիլաջյանին մակագրվել է 16.04.2024 թվականին։
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում։
Ուսումնասիրելով հայցադիմումը և կից փաստաթղթերը՝ Դատարանը գտնում է, որ Դա Մէն ՍՊ ընկերության ներկայացուցիչ Դավիթ Ամիրյանի կողմից ներկայացված հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ, 122-րդ հոդվածների և 27.2-րդ գլխով նախատեսված պահանջներին համապատասխան։
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին։
Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում։
Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված։
Հաշվի առնելով վերոգրյալը, Դատարանը գտնում է, որ ՀՀ ներքին գործերի

նախարարությունից պետք է պահանջել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված՝ տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:
Դատարանը հարկ է համարում պարզաբանել, որ սույն որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում պատասխանող ՀՀ ներքին գործերի նախարարությունը կարող է ներկայացնել տվյալ գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները միայն ապացույցները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը՝ իրենից անկախ պատճառներով, ինչպես նաև հայցադիմումի պատասխանը ներկայացվում է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 188-րդ, 199-րդ, 200-րդ հոդվածներով և 27.2 գլխով նախատեսված հոդվածներով՝ Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. ՝Դա ՄԷՆ՝ ՍՊ ընկերության ներկայացուցիչ Դավիթ Ամիրյանի կողմից ներկայացված հայցադիմումն ընդունել վարույթ:

2. ՀՀ ներքին գործերի նախարարությունից պահանջել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:
3. Ապացույցներ պահանջելու վերաբերյալ սույն որոշման 2-րդ կետի պահանջները պատասխանողի կողմից ենթակա է կատարման սույն որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:
4. ՀՀ ներքին գործերի նախարարությունն իրավունք ունի հայցադիմումի պատասխան ներկայացնել հայցադիմումը վարույթ ընդունելու մասին սույն որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:
5. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ Աննա Շիլաջյան

Digitally signed by SHILAJYAN ANNA 5208910872
Date: 2024.04.23 18:07:22 AMT